**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 2**
**Գնահատող հանձնաժողովի նիստի**
**Протокол заседания оценочной комиссии № 2**

**1. Տվյալներ պատվիրատուի, ընթացակարգի (ծածկագրի), ապրանքների ձեռք բերման, նիստի անցկացման մասին /Данные о заказчике, процедуре (код), приобретении товара, проведении заседания**

| | |
|---|---|
| Պատվիրատու / Заказчик | *«ՀԱԷԿ» ՓԲԸ / ЗАО «ААЭК»* |
| Գտնվելու վայրը / Адрес | *ՀՀ Արմավիրի մարզ, ք. Մեծամոր / РА, Армавирский марз, г. Мецамор* |
| Ընթացակարգի ծածկագիրը / Код процедуры | *ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-38/25 / HAEK-GHAPDzB-38/25* |
| Ձեռք բերվող ապրանքի անվանումը / Наименование приобретаемого товара | *Չոր բորաթթու / Борная кислота* |
| Չափաբաժինների քանակը/ Количество лотах | *1* |
| Նիստի անցկացման վայրը / Место проведения заседания | *«ՀԱԷԿ» ՓԲԸ, վարչական շենք / ЗАО «ААЭК», административный корпус* |
| Նիստի անցկացման օրը և ժամը / Дата и время поведения заседания | *22.09.2025թ./г., 16:00* |
| Նիստի անցկացման նպատակը / Цель проведения заседания | *Մասնակցության հայտերի բացում և գնահատում / Открытие заявок на участие и оценка заявок* |

**2. Տվյալներ հանձնաժողովի կազմի մասին**
**Данные о членах комиссии**

| | | | |
|---|---|---|---|
| Հանձնաժողովի նախագահ Председатель комиссии | ***Գ. Մարկոսյան / Г. Маркосян*** | *ԳԲ առաջատար մասնագետ / ВС ОЗ* | ԳՊ/ԳՀՊ |
| Հանձնաժողովի անդամներ / Члены комиссии | ***Է. Ավանեսով / Э. Аванесов*** | *ՌԱԲ պետի տեղակալ / ЗН ОРБ* | ԳՊ/ԳԱ |
| | ***Ս. Սաֆարյան / С. Сафарян*** | *ՌԱ պետի տեղակալ / ЗН РЦ* | ԳՊ/ԳԱ |
| | ***Վ. Մանուկյան / В. Манукян*** | *ԳԲ առաջատար մասնագետ / ВС ОЗ* | ԳՊ/ԲԱ |
| | ***Ա. Մելքոնյան / А. Мелконян*** | *ԳԲ առաջատար մասնագետ / ВС ОЗ* | ԳՊ/ԲԱ |
| Համակարգող-քարտուղար / координатор - секретарь | ***Հ.Գրիգորյան / А. Григорян*** | *ԳԸԲ գլխավոր մասնագետ/ ГС ОЗП* | |
| Այլ տեղեկություններ | Հանձնաժողովի նախագահ Գ. Մարկոյսանը նիստին ներկա չէ: Նիստը նախագահում է Է. Ավանեսովը: Председатель комиссии Г. Маркойсан на заседании не присутствует. Заседание руководит Э. Аванесов. | | |

**3. Տվյալներ գնման անհրաժեշտության, գնման ձևի ընտրության հիմնավորման, ձեռք բերվող ապրանքի նախահաշվային գնի վերաբերյալ**
**Данные о необходимости закупки, обосновании выбора вида закупки, цене закупки (сметная цена)**

| | |
|---|---|
| Գնման անհրաժեշտությունը և գնման ձևի ընտրության հիմնավորումը Обоснование необходимости закупки и выбора вида закупки | *«Գնումների մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մաս, «ՀԱԷԿ» ՓԲԸ 2025թ. Գնումների պլանի 1.8.1 կետ ч. 1 статьи 22 Закона РА «О закупках» п 1.8.1 плана закупки ЗАО «ААЭК» на 2025г.* |
| Հանձնաժողովի նախագահը հայտարարեց նիստը բացված և հրապարակեց գնման առարկայի նախահաշվային գինը՝ մեկ թվով արտահայտված (ՀՀ դրամ) Председатель комиссии объявил заседание открытым и объявил цену закупки, выраженную одним числом (драм РА) | *30,000,000.0* |

**4. Տվյալներ հրավերում կատարված փոփոխությունների, ստացված հարցումների և տրամադրված պարզաբանումների վերաբերյալ**
**Данные об изменениях внесенных в текст приглашения, о полученных запросах и предоставленные разъяснения**

| | |
|---|---|
| Հրավերում կատարված փոփոխություններ Изменения внесённые в приглашение | *Առկա չեն* |
| Գնման վերաբերյալ ստացված հարցումները և ներկայացված պարզաբանումները Полученные запросы и предоставленные разъяснения относительно закупочной процедуры | *Առկա չեն* |

**5. Տվյալներ մասնակիցների մասին**
**Данные об участниках**

| | |
|---|---|
| *Հայտ ներկայացրած մասնակիցների քանակը* | *4* |

| | |
|---|---|
| **Число участников, представивших заявку**<br>**Հայտ ներկայացրած մասնակցի անվանումը, հասցեն, հեռախոսի համարը, էլեկտրոնային փոստի հասցեն**<br>**Название, адрес, номер телефона , почта организаций, представивших заявку** | ***«Նիկօ-Տեկ» ՍՊԸ / ООО Нико-Тек***<br>*ՀՀ, ք.Երևան, Օրբելի 33Ա, բն. 15*<br>*РА, г.Ереван, Орбели 33А, кв. 15*<br>*deltant@mail.ru հեռ./ тел. +374 98 02 03 04* |
| | ***«Մեդիսար» ՍՊԸ / ООО Медисар***<br>*ՀՀ, ք.Երևան, Գետառի 4/9,*<br>*РА, г.Ереван, Гетар 4/9*<br>*sales@medisar.am info@medisar.am հեռ./ тел. +374 95 54 30 78* |
| | ***«Յունիքիմ» ՍՊԸ / ООО Юиником***<br>*ՀՀ, ք.Երևան, Արտաշատի խճուղի 11,*<br>*РА, г.Ереван, шоссе Арташата 11,*<br>*info@unichemllc.com հեռ./ тел. +374 (43) 49 77 99* |
| | ***«Նովելլա» ՍՊԸ / ООО Новелла***<br>*ՀՀ, ք.Երևան, Քոչար 14/2, 5*<br>*РА, г. Ереван, Кочар 14/2, 5*<br>*Novela20@yandex.ru հեռ./ тел. +374 96 04 50 00* |

## 6. Տվյալներ ներկայացված հայտերի մասին
## Данные о представленных заявках

| | | |
|---|---|---|
| **Տվյալներ հայտում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության մասին**<br>**Данные о наличии документов в заявке, требуемых приглашением** | **Մասնակցի անվանումը**<br>**Наименование участника** | **Գնահատվել է / оценка**<br>(նշել բավարար կամ անբավարար)<br>(удовлетворительно / неудовлетворительно) |
| | ***«Նիկօ-Տեկ» ՍՊԸ / ООО Нико-Тек*** | *բավարար / удовлетворительно* |
| | ***«Մեդիսար» ՍՊԸ / ООО Медисар*** | *բավարար / удовлетворительно* |
| | ***«Յունիքիմ» ՍՊԸ / ООО Юником*** | *բավարար / удовлетворительно* |
| | ***«Նովելլա» ՍՊԸ / ООО Новелла*** | *անբավարար / неудовлетворительно* |
| **Ընդունվեց որոշում՝ կողմ - 4, դեմ -0**<br>**Принято решение: за – 4, против - 0** | | |
| **Տվյալներ մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին**<br>**Данные о соответствии составления представленных участником документов условиям, установленным приглашением** | **Մասնակցի անվանումը**<br>**Наименование участника** | **Գնահատվել է / оценка**<br>(նշել բավարար կամ անբավարար)<br>(удовлетворительно / неудовлетворительно) |
| | ***«Նիկօ-Տեկ» ՍՊԸ / ООО Нико-Тек*** | *բավարար / удовлетворительно* |
| | ***«Մեդիսար» ՍՊԸ / ООО Медисар*** | *բավարար / удовлетворительно* |
| | ***«Յունիքիմ» ՍՊԸ / ООО Юником*** | *բավարար / удовлетворительно* |
| | ***«Նովելլա» ՍՊԸ / ООО Новелла*** | *անբավարար / неудовлетворительно* |
| **Ընդունվեց որոշում՝ կողմ - 4, դեմ -0**<br>**Принято решение: за – 4, против - 0** | | |

## 7. Մասնակիցների կողմից առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրերի համապատասխանությունը հրավերով սահմանված պահանջներին
## Соответствие технических характеристик товаров, предлагаемых участниками, к требованиям установленными приглашением

| Հ/Հ | Մասնակցի անվանումը<br>Наименование участника | **Ապրանքի ամբողջական նկարագիր**<br>(գնահատվել է՝ բավարար / անբավարար)<br>**Полное описание товаров**<br>(оценка-удовлетворительно / неудовлетворительно)) | **Անհամապատասխանության նկարագրություն**<br>**Описание несоответствия** |
|---|---|---|---|
| *1* | ***«Նիկօ-Տեկ» ՍՊԸ / ООО Нико-Тек*** | *բավարար / удовлетворительно* | *Անհապապրասխանություններ չեն արձանագրվել / Несоответствия не зафиксированы* |
| *2* | ***«Մեդիսար» ՍՊԸ / ООО Медисар*** | *բավարար / удовлетворительно* | *Անհապապրասխանություններ չեն արձանագրվել / Несоответствия не зафиксированы* |
| *3* | ***«Յունիքիմ» ՍՊԸ / ООО Юником*** | *բավարար / удовлетворительно* | *Անհապապրասխանություններ չեն արձանագրվել / Несоответствия не зафиксированы* |
| *4* | ***«Նովելլա» ՍՊԸ / ООО Новелла*** | *անբավարար / неудовлетворитель но* | |
| **Ընդունվեց որոշում՝ կողմ -4, դեմ -0**<br>**Принято решение: за –4, против - 0** | | | |

## 8. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը / Цена, предложенная каждым из участников

| Չ/Հ | Ձեռք բերվող ապրանքի անվանումը наименование товара | | Գնման գին (ՀՀ դրամ) / цена закупки (драмов РА) | Մասնակիցների գնային առաջարկները/ Ценовые предложения участников | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | «Նիկո-Տեկ» ՍՊԸ / ООО Нико-Тек | | «Մեդիսար» ՍՊԸ / ООО Медисар | | «Յունիքիմ» ՍՊԸ / ООО Юниким | | «Նովելլա» ՍՊԸ / ООО Новелла | |
| | | | | առանց ԱԱՀ / без НДС | ներառյալ ԱԱՀ / вкл. НДС | առանց ԱԱՀ / без НДС | ներառյալ ԱԱՀ / вкл. НДС | առանց ԱԱՀ / без НДС | ներառյալ ԱԱՀ / вкл. НДС | առանց ԱԱՀ / без НДС | ներառյալ ԱԱՀ / вкл. НДС |
| 1 | *Չոր բորաթթու* | *Борная кислота* | *30,000,000.0* | *16,700,000.0* | *20,040,000.0* | *24,883,333.33* | *29,860,000.0* | *36,000,000.0* | *43,200,000.0* | *50,000,000.0* | *60,000,000.0* |

## 9. Գնահատող հանձնաժողովի կողմից կայացված որոշում

## Решение, принятое оценочной комиссией

Գնահատող հանձնաժողովը **«Նովելլա» ՍՊԸ-ի** մասնակցության հայտի փաստաթղթերի գնահատման արդյունքում արձանագրեց հետևյալը.

1. մասնակիցը սույն ընթացակարգի հրավերով պահանջվող հայտի ապահովումը կանխիկ փողի տեսքով փոխանցել է «ՀԱԷԿ» ՓԲԸ հաշվեհամարին,
2. մասնակցի ներկայացրած հավելված 1-ը (դիմում հայտարարություն) չի համապատասխանում սույն ընթացակարգի հրավերի օրինակելի ձևին, մասնավորապես բացակայում է հետևյալը՝« Սույնով (մասնակցի անվանում-ը) հայտարարում և հավաստում է, որ՝ 1) (մասնակցի անվանում-ը) և իրեն փոխկապակցված անձինք…», «Ստորև ներկայացնում է մասնակցի անվանումը իրական շահառուների վերաբերյալ տեղեկություններ պարունակող կայքէջի հղումը՝ --------------------------------------------------**»,
3. մասնակիցը՝ իրական շահառուների վերաբերյալ տեղեկություններ պարունակող կայքէջի հղումը ներկայացրել է առանձին հավելվածի տեսքով, սակայն գնանշման հարցման դեպքում իրական շահառուների վերաբերյալ տեղեկություններ պարունակող կայքէջի հղումը պետք է ներկայցնել հավելված 1-ում,
4. մասնակցության հայտի փաստաթղթերը ստորագրված չեն ոչ ձեռագիր ստորագրությամբ, ոչ էլեկտրոնային-թվային ստորագրությամբ,
5. մասնակիցը ներկայացրել է գնման գինը գերազանցող գնային առաջարկ:

Համաձայն սույն ընթացակարգի հրավերի 1-ին մասի 7-րդ կետի 7.1 ենթակետի 2-րդ պարբերության՝ «Կանխիկ փողի ձևով ներկայացված հայտի ապահովումը պետք է փոխանցվի Կենտրոնական գանձապետարանում լիազորված մարմնի անվամբ բացված «900008000466» գանձապետական հաշվին…» և 7.6 ենթակետի «Մասնակցի հայտը ենթակա է մերժման, եթե դրանում բացակայում է հայտի ապահովումը, կամ եթե այն ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան»:

«Նովելլա» ՍՊԸ-ն կանխիկ փողի ձևով հայտի ապահովումը փոխանցել է «ՀԱԷԿ» ՓԲԸ (Պատվիրատուի) հաշվեհամարին, այլ ոչ թե «900008000466» գանձապետական հաշվին:

«Նովելլա» ՍՊԸ-ն ներկայացրել է գնման գինը գերազանցող գնային առաջարկ, որը (ինչպես նաև մասնակցության հայտի մնացած փաստաթղթերը) ստորագրված չեն, այդ թվում էլեկտրոնային-թվային ստորագրությամբ: Էլեկտրոնային կառավարման ենթակառուցվածքների ներդրման գրասենյակի https://www.ekeng.am/hy/sec_sub/sign_check պաշտոնական էլեկտրոնային կայքի «Ստուգել ստորագրությունը» (Գլխավոր էջ —> Թվային ստորագրություն —> Ստուգել ստորագրությունը) բաժնում մասնակցության հայտի գնային առաջարկը (ֆայլը բեռնելիս) ստուգելիս էլ արտացոլվում է հետևյալը՝ «Փաստաթուղթը ստորագրություն չի պարունակում»:

«Նովելլա» ՍՊԸ-ն համաձայն մասնակցության հայտի դիմում հայտարարության (հավելված 1) հանդիսանում է ՀՀ ռեզիդենտ:

ՀՀ Կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշման Հավելված 1-ի 32-րդ կետի 11-րդ ենթակետի համաձայն «…Գնման ընթացակարգն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով կազմակերպված լինելու դեպքում Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակիցները հայտում ներառվող՝ իրենց կողմից հաստատվող փաստաթղթերը հաստատում են էլեկտրոնային թվային ստորագրությամբ, իսկ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ չհանդիսացող մասնակիցները՝ այդ փաստաթղթերը ներկայացնում են հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով»:

ՀՀ Կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշման Հավելված 1-ի 41-րդ կետի համաձայն «Եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ **Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ**, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները»

ՀՀ Ֆինանսների նախարարություն գնումների համակարգի https://gnumner.minfin.am/ կայքի «Հաճախ ստացվող հարցադրումների վերաբերյալ տրամադրված պարզաբանումներ» բաժնում «Գնման գործընթացների վերաբերյալ պատվիրատուներից հաճախակի ստացվող հարցադրումներ եվ դրանց վերաբերյալ տրամադրված պարզաբանումներ» ենթաբաժնում ունենք հետևյալ հարցը և դրան ՀՀ Ֆինանսների նախարարության կողմից տրված պարզաբանումը՝

«Հարց - **Էլեկտրոնային եղանակով իրականացվող գնումների դեպքում ՀՀ ռեզիդենտ մասնակցի կողմից ներկայացված գնային առաջարկը ո՞ր դեպքում է ենթակա շտկման:**

Պատասխան- **Նշված դեպքում գնային առաջարկը ենթակա է շտկման երբ <u>հաստատված է մասնակցի ստորագրությամբ, սակայն բացակայում է էլեկտրոնային թվային ստորագրությունը</u>**: Ընդ որում շտկումը վերաբերում **է միայն էլեկտրոնային թվային ստորագրությամբ հաստատելուն:»**

*ՀՀ Կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշման Հավելված 1-ի 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն «Հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկը և (կամ) հայտի ապահովումը, կամ եթե դրանք ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան, բացառությամբ սույն կարգի 41-րդ կետով նախատեսված դեպքի: Գնումն էլեկտրոնային համակարգով իրականացվելու դեպքում հիմք է ընդունվում համակարգում կցված՝ մասնակցի կողմից հաստատված գնային առաջարկը»:*

*Հաշվի առնելով վերոգրյալը Գնահատող հանձնաժողովը «Նովելլա» ՍՊԸ-ի մասնակցության հայտը գնահատեց անբավարար և մերժեց այն:*

*Оценочная комиссия в результате оценки документов заявки на участие ООО «Новелла» зафиксировала следующее:*

1. *Участник перечислил обеспечение заявки, предусмотренное приглашением на данную процедуру, наличными денежными средствами на счет ЗАО «АНПП»,*
2. *Приложение 1 (заявление о заявке), представленное участником, не соответствует типовой форме приглашения к участию в настоящей процедуре, в частности, отсутствуют следующее: «Настоящим (наименование участника) заявляет и удостоверяет, что: 1) (наименование участника) и его аффилированные лица...», «Ниже приведена ссылка на сайт, содержащий информацию о бенефициарных владельцах участника: ---------------------------------------------------------**»,*
3. *Участник предоставил ссылку на сайт, содержащий информацию о бенефициарных владельцах, в виде отдельного приложения, однако в случае запроса котировок ссылка на сайт, содержащий информацию о бенефициарных владельцах, должна быть предоставлена в Приложении 1,*
4. *документы заявки на участие не подписаны,*
5. *Участник подал ценовое предложение, превышающее цену зокупки.*

*Согласно абзацу второму подпункта 7.1 пункта 7 части 1 приглашения к участию в настоящей процедуре «Обеспечение заявки, представленной в виде денежных средств, должно быть перечислено на казначейский счет «900008000466», открытый на имя уполномоченного органа в Центральном казначействе...» и подпункту 7.6 «Заявка участника подлежит отклонению в случае отсутствия в ней обеспечения заявки, а также ее подачи в форме, не соответствующей требованиям приглашения».*

*ООО «Новелла» перечислило обеспечение заявки в виде денежных средств на расчетный счет ЗАО «АНПП» (Заказчик), а не на казначейский счет «900008000466».*

*ООО «Новелла» представило ценовое предложение, превышающее цену покупки, которое (как и остальные документы заявки на участие) не подписано, в том числе электронно-цифровой подписью. При проверке ценового предложения заявки на участие (при загрузке файла) в разделе «Проверка подписи» официального сайта Управления внедрения инфраструктуры электронного управления https://www.ekeng.am/hy/sec_sub/sign_check (Главная страница —> Электронная подпись —> Проверка подписи) отображается следующее: «Документ не содержит подписи».*

*ООО «Новелла», согласно заявке на участие (Приложение 1), является резидентом Республики Армения.*

*Согласно подпункту 11 пункта 32 Приложения 1 Постановления Правительства РА № 526-Н от 04.05.2017 г., «...В случае организации процедуры закупки посредством электронной системы закупок участники, являющиеся резидентами Республики Армения, подтверждают включенные в заявку и утвержденные ими документы электронной цифровой подписью, а участники, не являющиеся резидентами Республики Армения, представляют эти документы в распечатанном (сканированном) виде с утвержденного оригинала документа». Согласно пункту 41 Приложения 1 к Постановлению Правительства РА № 526-Н от 04.05.2017 г., «Если в результате оценки, проведенной в ходе заседания по раскрытию и оценке заявок, в заявке участника зафиксированы несоответствия, в том числе в случаях, когда документы, утвержденные участником – резидентом Республики Армения, включенные в заявку, или их часть не утверждены электронной цифровой подписью, комиссия приостанавливает заседание на один рабочий день, о чем секретарь комиссии в тот же день уведомляет участника в электронном виде, предлагая устранить несоответствие до истечения срока приостановления. В уведомлении, направляемом участнику, подробно описываются выявленные несоответствия».*

*В разделе «Часто задаваемые вопросы» системы закупок Министерства финансов Республики Армения https://gnumner.minfin.am/, в подразделе «Часто задаваемые вопросы заказчиков по процедурам закупок и предоставляемые по ним разъяснения», представлен следующий вопрос и разъяснение Министерства финансов Республики Армения:*

*Вопрос: В каком случае при закупках, осуществляемых в электронной форме, подлежит корректировке ценовое предложение, представленное участником-резидентом Республики Армения?*

*Ответ: В указанном случае корректировке подлежит ценовое предложение, если оно утверждено подписью участника, но отсутствует электронная цифровая подпись. При этом корректировка применяется только к утверждению электронной цифровой подписью.*

*Согласно подпункту 4 пункта 40 Приложения 1 к Постановлению Правительства РА № 526-Н от 04.05.2017 г., «Комиссия отклоняет заявки, не включающие ценовое предложение и (или) обеспечение заявки, либо представленные способом, не соответствующим требованиям приглашения, за исключением случая, предусмотренного пунктом 41 настоящего Порядка. В случае осуществления закупки посредством электронной системы за основу принимается ценовое предложение, приложенное к системе и утвержденное участником».*
*Учитывая вышеуказанное, оценочная комиссия оценила заявку на участие ООО «Новелла» как неудовлетворительную и отклонила ее.*

***Ընդունվեց որոշում՝ կողմ - 4, դեմ -0***
***Принято решение: за – 4, против – 0***

**10. Տվյալներ չափաբաժնի համար նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցի վերաբերյալ**
**Данные об участнике, подавшим минимальное ценовое предложение по лота**

| Մասնակցի տվյալները<br>Данные участника | Չափաբաժինները / Лоты |
|---|---|
| *«Նիկօ-Տեկ» ՍՊԸ / ООО Нико-Тек* | *1* |

**11. Տվյալներ ընտրված մասնակիցների վերաբերյալ**
**Данные об отобранных участниках**

| Մասնակցի զբաղեցրած տեղը<br>Занявшее место участника | Մասնակցի տվյալները<br>Данные участника | Չափաբաժինները<br>Лоты |
|---|---|---|
| Ընտրված մանակից<br>Отобранный участник | *«Նիկօ-Տեկ» ՍՊԸ / ООО Нико-Тек* | *1* |
| *Գնահատող հանձնաժողովը փաստաթղթերի գնահատման արդյունքում որոշեց **«Նիկօ-Տեկ» ՍՊԸ-ին** ճանաչել ընտրված մասնակից և առաջարկել կնքել չոր բորաթթվի մատակարարման պայմանագիր: / В результате оценки документации признать ООО Нико-Тек отобранными участником и предложить заключить договор на поставку сухой борной кислоты.*<br>**Ընդունվեց որոշում՝ կողմ - 4, դեմ -0 /**<br>**Принято решение: за – 4, против - 0** | | |

**Հանձնաժողովի նախագահ**
**Председатель комиссии ՝** ____________ **Է. Ավանեսով / Э. Аванесов**

**Հանձնաժողովի անդամներ՝**
**Члены комиссии** ____________ **Ս. Սաֆարյան / С. Сафарян**

____________ **Վ. Մանուկյան / В. Манукян**

____________ **Ա. Մելքոնյան / А. Мелконян**

**Համակարգող-քարտուղար՝**
**Координирующий секретарь** ____________ **Հ. Գրիգորյան / А. Григорян**